

Մարզպետն այցելեց Թալինի տարածաշրջան

22.11.2016

Մարզպետ Գաբրիել Գյոզալյանը նոյեմբերի 22-ին այցելեց Թալինի տարածաշրջան եւ հանդիպում ունեցավ համայնքների ղեկավարների հետ:

Թալինի քաղաքապետարանում տեղի ունեցած խորհրդակցությանը մարզպետը ներկայացրեց նոյեմբերի 18-ին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի՝ Արագածոտնի մարզ կատարած այցելության մանրամասները, եւ քննարկվեց այդ կապակցությամբ տրված հանձնարարականները: Մասնավորապես նշվեց, որ համայնքները պետք է ունենան իրենց զարգացման ռազմավարական ծրագրերը, որոնց համապատասխան էլ, ըստ առաջնահերթության, պետք է հստակեցվեն առաջիկա անելիքները: Այդ իսկ առումով, կարելի է ճիշտ եւ իրատեսական ծրագրերի կազմման անհրաժեշտությունը, ինչի կապակցությամբ մարզպետը հավաստիացրեց, որ համայնքապետերը անհրաժեշտ մեթոդական եւ խորհրդատվական օժանդակություն կստանան մարզպետարանի համապատասխան մասնագետներից:

Այցի շրջանակում Գաբրիել Գյոզալյանը հանդիպեւ նաեւ տարաշաճրջանի բնակիչների հետ: Կատարվեց քաղաքացիների ընդունալություն, որի ընթացքում բարձրացվեցին սոցիալական, աշխատանքային, առողջապահական, անձնական այլ բնույթի հարցեր: 17 դիմումատուի տրվեց դրամական աջակցություն: